

891.99

Բ-17

19048

ԳԱՐԵԼԵՍՆՅ Ս.

# ԱՍՏՈՒԱԾ ԶՃԱՆԱՇՈՂ

(ԹԱՆՂԻ ԹԱՆՄԱԶ)

„Թո՞ղ ինձ աջխարքը „Թաճդրի  
թաճմազ“ ասի, բայց իս կարծիքով  
իսկ աստուածպատութիւնն այն  
է, որ Ազնվորած հոգիները մեկ մեկ  
այսպէս դժողքն ուղարկեն“:

Էջ 31.



Թ Ի Գ Լ Ի Ց

Ճաշարան Արքայի թիվ. 21.

Տիպոգրաֆія Մ. Շարաձ, Նիս. 21.

1895



831-39

8-17

ԳՐԱԴԱՐԱՆ Ա.

ԱՍՏՈՒԱԾ ԶՃԱՆԱՌՈՂ

(ԹԱՆՂԻ ԹԱՆՄԱԶ)

„Թոն' ինձ աշխարքը „Թիամդի  
թանւազ“ ասի, բայց իսկ կարծիքով  
իսկ աստուածպաշտոնիթինճ այն  
է, որ ճղովուած հոգիմերը մէկ սէկ  
այսպէս դժողք ուղարկեմ։

Էջ 31.



Թ. Ֆ. Լ. Ա.

Ճպարտան Մ. Ճպարտան, Նիկ. 21.

Տիպոգրաֆія M. Шарадзе, Ник. 21.

1895

2003

4441  
Дозволено цензурою, Тифлисъ, 8-го Мая,  
1895 г.

Ատորին Բասենի բազմաթիւ գիւղերից մինն  
է Բաշգեղը, որ գտնվում է Մայր-Արաքսի աջ  
կոանը բարձրաւանդակ տեղ։ Սուկաւ լեառը, ո-  
րին թուրք ու հայ «Քէօսա-դաղ» են ասում, այն-  
պէս պարզ ու մօտիկ է երկում Բաշգեղից, կար-  
ծես մի քարընկէց հեռու լինի. այն ինչ այդ  
վեհապանծ, լերկ գագաթը ոռւսաց սահմանից  
այն կողմը, Տաճկա-Հայաստանում է։ Ով եղել  
է մի անգամ Բասեն, նա կիմանայ թէ ո՞րքան ակ-  
նահաճոյ տեսարան է «Քէօսա-դաղը» առւած-  
տուայ և իրիկնապահի պարզ ժամերին։ Մարդ  
նայելուց չի կտանում, զմայլում է ու մնում  
մեխուած, երբ կանգնած է Բաշգեղի նոր գերեզ-  
մանատանը—Ղարաբաղցի արիասիրտ Արքահամի  
շիրմի մօտ ու այնտեղից դիտում է շրջակայ ուր-  
տագրաւ տեսարանները՝ մէկ բարձրանալով լեռ-  
ների գագաթը, մէկ սուզուելով ձորերի խորքերը,  
մէկ սաւառնելով դէպ անհուն, անվերջ հողիզոնը,  
Սասեաց պարը...

1895 թուի Յունուարի խիստ ցրտերին էր,  
երբ Բասենի բարձրաւանդակի խոր ձիւնը կտրելով

Հասայ Բաշգեղ և իջայ «բաշմուխտարի» օդայումք Պայտաձև թախտի վրայ օդայի պատերի տակ շարուած էին բաւական թուով գիւղացիք. որը ծալպատակ, որը ծնկաչոր, և ականջ դառած լսում էին Ալաշկերտից նոր գաղթած մի ծերունու զրոյցները տաճկաց բարբարոսութիւնների մասին: Ունկնդիրներից որը ան ու վիշտ էր անում, որը կոները խաչած միայն լալիս էր, որն էլ երեսը խաչակնբերով «Աստուած, դու օդնութիւն հաս» էր գոչում:

«Բաշմուխտար» նշանակում է եօթ գիւղեւ տանուտէրների գլխաւոր: Այդ պաշտօնի տէրը մի լիասիրտ և հիւրասէր անձն էր, մօտ քառասուն տարեկան: Տաճկահայաստանից դէպի Ուռուսահայաստան գաղթող կամ Արաքս գետից անցնող շատքից ուղևոր կըլինի, որ նրա օջաղում հաց չըկտրի: Նրա օդան ամեն երեկոյ լիքն է ուղևորներով ու պանդուխտներով: Դրացի թէ օտարական՝ ամենքն էլ մեծ յարգանքով ու ակնածութեամբ էին վերաբերում թէ դէպի բաշմուխտար Սիմօնի անձնաւորութիւնը և թէ դէպի նրանահապետական մեծ օջաղը:

Խօսք ու զրոյցներից նկատում էի, որ այդ շէն օջաղում քահանաներ ևս եղել են, որի պատճառով նրանց ազգը տէրուով էր սկսվում: Բայց ինձ համար մի բան մութն էր. չէի իմանում թէ

թնչո՞ւ այդ հիւրընկալ տանը մի սոսկալի մականուն էր կպած: Լաւ տեղեակ էի, որ հայ գաւառներում սովորութիւն կայ, մի անձի կամ օջախի փութ անուն են կպցնում, օրինակ՝ Իծարածանց, Վարձափեշանց, Օձխուզողանց, Աղուէսուտողանց, Վաշեկրծողանց և այլ ծիծաղաշարժ անուններ:

Բայց երբէք չէի լսել, որ մի օջաղի անուն լինի «Աստուած չճանաչողանց»: Բասենու բոլոր ժողովուրդը բաշմուխտար Սիմօնի տանը կանչում էր «Թանդրի թանըմազանց»: Դա այնպիսի մեծ քիքս ու սև բիծ էր, որ չկարծեմ թէ՝ աշխարհիս վրայ մի պատուաւոր մարդ յանձն առնէր այդ անարգանքը որ և է գնով: Առաջին անգամ լսելիս կարծեցի, թէ գիւղացիք նախանձից ու չարակամութիւնից են սաղացրել այդ անունը, բայց երբ նկատեցի, որ բացի ուրիշներից, բաշմուխտարն ու իւր բարեկամներն էլ են գործածում այդ անունը իբրև նախատինք ըսպարունակող գարձուած, հետաքրքրութիւնս վառուեց, բորբոքուեց: Վճռեցի անպատճառ իմանալ այդ ազգանուան սկզբնաւորութեան պատմութիւնը, ապա թէ գուրս գալ այդ գիւղից:

Մինչ ես յարմար առիթ էի փնտում, որ զբաղմունքից ազատ միջոցին գիւղի ծերերի մօտ գնամ, դէպքը ինձ օդնութեան հասաւ: Հետեւ աեալ օրը գնացել էի գիւղի ժամը ձեռագիր ա-

ւետարանների նայելու, նրանց յիշատակարանները վերցնելու։ Երբ վերջացրել դուրս էի գալիս, ժամի մղակի մօտ տեսայ մի ծերունի՝ քուրքի միջ կողոլուած։ Պրան գիւղի մասին հարց ու փորձ անելով խօսքի թելը բերի, հասցրի բաշմուխտարանց ազգաբանութեան մօտ ու յետոյ ասի.

— Աստուած սիրես, ծերուկ, ինձ տարակոյսից ազատիր։

— Ի՞նչ է տարակոյսդ, հարցրեց նա։

— Ահա՛ թէ ինչ ձեր գեղի բաշմուխտարը հիւրասէր, հացով մարդ է երևում։

— Ճշմարիտ է, շատ հիւրասէր մարդ է, խօսքս ընդհատեց ծերունին, հայր Աբրահամի օջաղ որ ասել են, հէնց նա է։

— Ասածիդ անտարակոյս հաւատում եմ, ծերունի, հապա պատճառն ի՞նչ է, որ նրանց «Թանգրի թանըմաղանց», այսինքն «Աստուած չճանաչողանց» են կանչում։

— Հա՛, հիմի իմացայ թէ ի՞նչ ես ասում, խօսեց բարի ծերուկը աչքերը վրէս չոելով. դու հին բանից ես տեղակ տալիս, աչքիս վրայ— Զիբուխը գրապանից հանեց, մտմտալէ թափ տուեց, մտմտալէ լցրեց, հազարէ լուցկին հանեց, չիբուխը խորդալով վառեց ու միանդամ փուք առնելով ինձ նայեց ու բերանը բանալով այսպէս խօսեց. «Զանս քեզ մատաղ, հայ-աղբեր, ինչպէս մեր, այն-

պէս էլ բաշմուխտարի պապերը բնիկ այստեղացի չեն։ Ամեն էլ գաղթել եկել են Խասզելից, որ Մուշ քաղաքի մօտին է։ Ինչպէս հիմի կողոպտվում, յափշտակվում են հայ գեղերը քրդերից, թուրքերից, այնպէս էլ 100—150 տարի առաջ շատ նեղ օրի մէջ են եղել հայ ժողովուրդները մուլթազիմերի, շահնաների ձեռից։ Բայց գիտե՞ս, ի՞նչ է նշանակում թուրք մուլթազիմ, շահնա:

Տարօնի երկրագործ հայը, որ երազում դըրանց պատկերը տեսնում է, վեր է թռչում ու սարսափից կուչ գալիս։ Ծահնաները ինչպէս հիմի, այնպէս էլ առաջ տասանորդ ժողովելու համար շրջում էին կալերը և հինգից մէկը բահուա վերցնում, իսկ հարկ ժողովելու անոնը որ լսում էին գիւղացիք, այնպէս էին սարսում, ինչպէս ահեղ դատաստանից։ Մուլթազիմերը 10—20 ձիւորով ընկնում էին գեղերը և հարկ պահանջում՝ ինչքան իրանց կամքը տալիս էր։ Համ իրանք էին ժողովորի հաշուով կերակրվում, համ իրանց ձիանը։ իրանք տների համ էին կտրացնում, լափում, ձիանը՝ հորերի գարին։ Հայերի անկողիները ծալքերից հանել էին տալիս, իրանց ձիաների ոտների տակ փռում, որ անասունները կակուլ բանի վրայ կանգնեն ու պառկեն։

Հայերից ով փող չունէր, հարկահաւաքները նրանց ասում էին.

— Զուր մի' աղաջիլ, թէկուզ խնդրելուց ա-  
տամներդ թափուեն, մենք բեզ ոչ ներողն ենք  
և ոչ ինայողը: Եթէ ուղում ես ծեծից ու բան-  
տից աղատուել գնա կնիկդ բե՛ր մեզ մօտ գրաւ  
թող: Մենք քո տեղակ քո բաժին հարկը կըվճա-  
րենք և քո կնկանն էլ մեր տանը իրրւ ապրանք  
կը բանացնենք, մինչեւ որ մեր փարան կը բերես,  
քո կնիկը կըտանես:

Թուրքերի ձեռից հայերն այսպէս անտանե-  
լի նեղութիւններ էին բաշում: Եթէ մէկի հար-  
կի փողը բիշ պակաս էր լինում, կատաղի հար-  
կահաւաքը միջոց չէր տալիս, որ ճարի, յետոյ  
տայ. տուանց ուշ դարձնելու նրա աղերսանքին  
հրամայում էր տները բանդել, և գերաններն ու  
կոճերը «բաղալիայի» (գլխահարկ) տեղ վաճա-  
ռել Այնպէս որ, տանեցիք՝ աղջիկ թէ կնիկ մը-  
նում էին մերկ մարմով, բաց երկնքի տակ:

Խասգեղի ժողովրդի մէջ ոյժ չէր մնացել.  
շարունակ ծեծ ու պատիժ ուտելուց ամենքն էլ  
դարձել էին վախկոտ, թոյլ: Ողջ գեղի մէջ մի-  
այն մի մարդ կար, որից թուրքերը ակնածում,  
բաշվում էին, իսկ հայերը իրանց հօր տեղ ըն-  
դունում, պատվում:

Այդ մարդը Աբրամ էր, թուրքերի հոգէ-  
առը, որին չգիտէին ինչպէս օյին դան, որ սիրո-  
ւերը հովանայ: Ճարահատած փութ անուններ

էին կացնում, կամ ասում էին «գեաւուր» կամ  
«քաւթար» (բորենի). բայց Աբրամը վրէն չէր  
առնում, այլ բառ օձի պէս զլուխը քաշ արած  
իւր բանին էր գնում ու տեղն ընկած ժամանակ  
շանթում, գաղում թուրք հարստահարիչներին:

Հերիք էր որ փանջէն (հինգ մատը) թուր-  
քի գոտիկը հասնէր, գիտէր թէ մուրտառ շունչը  
որտեղով պիտի հանի. Ինչպէս հիմի, այնպէս էլ  
այն ժամանակ հայերին արգելուած էր սուր,  
թուր պահել իրանց մօտ, դանակ ունեցողին ան-  
գամ պատժում էին կամ դար ու դարդակ պիտի  
լինէին հայերը կամ շատ շատ մի փայտի կտոր  
ունենալին:

Իսկ Աբրամը միշտ իւր կոնատակին այնպէս  
փայտ էր ման ածում, որ գոմշաբշուց էլ հաստ  
էր լինում. ուղտն ի՞նչ է, եթէ ուղտի բներակին  
մի անգամ խիեր, պարան կը գցէր: Եւ ինչո՞ւ  
չէր անիլ. Աբրամը մի հասակ ունէր բարդի ծա-  
ռի չափ. գոմշի պէս ուժեղ էր, առիւծի նման  
սրտոտ: Խնքն ունեռոր մարդ էր, ոչխար, տաւար,  
ջաղաց, ձիթհանք, գոմ, չայիր, արտեր, ամենն էլ  
ունէր:

Թուրք ու բուրդ Աբրամին չէին դիպչում,  
բայց միւս հայերին կողոպտում, հողի էին հա-  
ւասարեցնում: Որքան էլ հարստահարուածները  
ուղում էին Մուշ գնան, այնտեղի փաշային իրանց

ցաւերը գանգատուեն, ասեն, գայմագամը չէր  
թողնում: Բաւական չէր այդ. դեռ «շահնային»  
և հարկահաններին յորդորում էր, որ ինչ ուզե-  
նան հայերից պահանջեն, նեղը լծեն:

Աբրամը այս բաները տեսնում էր և փըր-  
փըրում, եփ գալիս. շատ էլ ատամները կրծում  
էր թուրքերի վրայ, բայց մենակ ի՞նչ կարող էր  
անել Երբեմ գեղամէջում երբ տեսնում էր գրա-  
ցուն աշկարայ զըկելիս, հանդէս էր գալիս տկա-  
րին պաշտպանում, թուրքի, քուրդի ձեռից ապ-  
րանքը Խլում, էլ ետ հային տալիս: Բայց այդ-  
պիսի բաների պատճառով վաղուց էր, Աբրամի  
վրայ Խէթ աչքով էին նայում թէ գայմագամը  
և թէ բոլոր մուլթաղիմները: Խում էին որ նա  
հայերին օգնում է, ժողովրդին հարկահանների  
դէմ գրգռում է. մէջլիս-լատարան էին կանչում,  
հարիւր տեսակ ամբաստանութիւններ կարդում  
նրա գլխին, որ մի բանով մեղադրեն ու բանտար-  
կեն: Բոլոր գիւղացիք դողալով սպասում էին, թէ  
ահա որտեղ որ է կոները կապած մէջլիսից դուրս  
կը բերեն, որ տանեն փաշայի մօտ կեղդելու,  
բայց Աբրամը իւր աննման հասակի հետ այնպէս  
ճարտար լեզու ու բնական խելք ունէր, որ նրա  
տուած պատասխաններից յետոյ գատաւորներն  
ու գայմագամն էին պարտական մնում նրան:

Երկու չառւշներ կային Մուշի ղաղէայի, այս-

ինքն գաւառի մէջ, նրանց անունն էր Հաջի ու Սա-  
ֆար: Հոտառ շների պէս տրանք հայ գեղերի մէջ ա-  
նարատ անկիւն չէին թողել: Հերիք չէր, որ Խասգե-  
ղում աչքի տեսած ոչ եղն էին թողել, ոչ ապրանք,  
գիշերը կամ հանդիցն էին գոլանում կամ գա-  
լիս գոլից հանում, այլ և սիրո առնելով հայե-  
լուր համբերութիւնից սկսել էին լրբանալ, դաշտ-  
գնացող հարս ու աղջկայ վրայ ընկնել, անպա-  
տիւ, գէշ խօսեր ասել:

Աբրամը դրանց արարմունքները տեսնելով, ու-  
րիշից լսելով կատաղում էր. չէր իմանում, ի՞նչ-  
պէս անի, որ այդ չառւշներից վրէժ հանի ամբողջ  
գեղի տեղ: Նա աւելի բան չէր ուզում, միայն ձեռ  
գցի մի կէս ժամ, նրանց հաղլաղորէ, ճշբռէ, ու-  
բաց թողնէ. տեսնի թարկ կանեն հային տան-  
չելը թէ չէ: Բայց չարագործ չառւշները յար-  
մար գէպքում նրա ճանկը չէին ընկնում: Գե-  
ղամէջում հանդիպած ժամանակ միայն կատակի  
ձեռվ մօտենում էին նրան:

— Ա՛ գեավոր, քէփդ ո՞նց է, հարցնում էր  
Հաջին:

— Քաւթարի պէս կըլի, չես գիտօւմ, պա-  
տասխանում էր Սափարն ու հրհուալէ ձին քը-  
շում, Աբրամի մօտից փախչում:

— Գնացէք, դովրանը (ժամանակ) ձերն էր  
ասում էր ետևներից Աբրամը կուրծքը ծեծելով,

թէ մի անգամ ձանկս կընկնէ՞ք, ես ձեզ քաւ-  
թարութիւնը ցոյց կը տամ: Ո՞վ գիտէ այն ժա-  
մանակ աւելի թունդ անուն կպցնէք ինձ:

Բայց նրա հերսն ու կատաղութիւնը չա-  
փից անցաւ այն ժամանակ, երբ լսեց թէ հարե-  
ւանի աղջիկ հազարվարդին գիշերը շահնա Սու-  
լէյմանը փախցրել է Սափարի ու Հաջու միջոցով,  
իսկ գեղի ամենասիրուն հարս Կաքաւին Խլել են  
իւր մարդու ձեռից այդ չառւշները և գայմագա-  
մի որդու համար տարել: Աբրամն ինքը վերկացաւ,  
գնաց Մուշ, բողոքեց գայմագամին, որ անօրէն  
բաներին վերջ տայ, չառւշներին սաստի, բայց  
լաղեայի գլխաւորը նրա բողոքը բանի տեղ չը-  
դնելով պինչն էլ վրէն ծոեց ու այդպէս ետ ածեց:

Դրանից յետոյ Աբրամն եկաւ այն մտքի,  
որ թուրքի, քուրդի հետ դատաստան մտնել հար-  
կաւոր չէ: Երբ ոյժ ունես՝ խփիր, ջարդիր. թէ  
ողջ մնաց, վախցից նաքեղ հետ բարեկամ կը դառնայ:

Եւ սկսեց ինքը օրինակով ցոյց տալ, թէ  
ո՞նց պէտք է պատժել կողոպտիչ ու կեղերիչ  
քուրդ ու թուրքին: Ոչ մէկին սրով չէր խփում:  
Աբրամը մատներ ունէր եղանի ձիւղերի չափ եր-  
կար. բռնում էր թուրքին ձեռների մէջ հաղա-  
ղում, ոնց որ կծան բանջարին հաղաղում են ու  
թոյլ փալաս շինած դէն գցում:

Կողոպտուած գեղացիք ամեն օր գնում էին  
գայմագամի ոտներն ընկնում, գողերի դէմ պաշտ-  
պանութիւն խնդրում: Մէկն ասում էր, եզւ տա-  
րան, միւսն ասում էր՝ ոչխարս քշեցին, երրորդը  
թէ՝ չայիրս կոխոտեցին, բարդերս վառեցին, բայց  
Աբրամը հուբմաթի (դատաստանատան) շէմքով չէր  
անցնում: Գայմագամը վաղուց աչքը կթած սպա-  
սում էր, որ Աբրամը իւր մօտ խնդրի, գանգատի  
գնայ: չէր լինում, չէր պատահում, որովհետեւ  
նրա մազին դիպչող չկար:

Գայմագամի այդ ցանկութիւնը լսելով Հա-  
ջին ու Սաֆարը գրգռուեցին ու մի օր եկան շահ-  
նային ասացին:

— Մենք գնալու ենք, գեավուր Աբրամի տա-  
ւարը քշենք, ապա տեսնենք սուս կը կենա՞յ, թէ  
ուրիշների պէս կը գայ գայմագամի մօտ լաց կըլի,  
որ ապրանքը ետ տան:

— Եթէ այդպէս մի քաջ բան անէք, պատաս-  
խանեց շահնան, ես ձեզ հինգ-հինգ ոսկի ըն-  
ծայ կը տամ: Աբրամը գոսող է, նա իւր անձնա-  
կան կորուստի համար գայմագամի մօտ գանգատ  
գնացողը չի: Գնա էլ, օգուտ չի տեսնիլ: Գլուխը  
բարը, հօ ապրանքը կը կորչի:

— Մեր գլխի վրայ, միամիտ կաց, վրայ բերեց  
Հաջին, միւս հայերի նման Աբրամին էլ այնպէս  
թափ տանք, որ գնայ, մազին հակը դառնայ:

— Բայց զգոյշ կացէք, տղէ՛րբ, խորհուրդ  
տուեց շահնան, բաւթար է, ձեզ չը բրքի:

— Միամիտ կաց, մենք էլ պակաս սարփ շը-  
ներ չենք, պարծեցաւ սրտամն Հաջին, բանը  
որ տեղն ընկնի, մենք նրա մորթին կը բերենք  
մէրտան ծախելու:

Ծահնայի և չառշների խօսակցութիւնը ա-  
մառնամտին էր:

Արբամը իբրև հողագործ մարդ իւր որդու  
հետ գնացել էր հանգը Խուրձ կրելու ու որ-  
դուց հեռու գաշտում ջոկ սայլի վրայ բարդակ-  
ներ էր բարձում: Որդու սայլը մօտ էր Մուշ  
գնացող Ճանապարհին: Հաջի ու Սաֆար չառշ-  
ները Խաս գեղից գուրս էին եկել, որ գնան Մուշ,  
անակնակալ պատահեցին Աբրամի որդուն սայլը  
բարձելիս.

— Հաջի, յանկարծ գոչեց Սափարը. այ  
քեզ գեավուր Աբրամի սայլը, Խուրձը, գոմեշները.  
մեր բաղդից ինքը չկայ, մէնակ որդին է. էլ ինչի  
ենք սպասում:

— Հը, լաւ բան ես ասում, Սափար, վրայ  
բերեց Հաջին, բայց որ կարեոր յանձնարա-  
րութեան պատճառով շուտ գայմագամի մօտ պէտ-  
քէ գնա՞նք: Ի՞նչ անենք, որ չուշանանք:

— Ինչո՞ւ ենք ուշանում, սայլն ու խուրձը  
իրան թողնենք, գոմեշները տանենք, ծախենք:

— Թէպէտ վրազ ենք, բայց այդ կարելի է,  
գնա՞նք, տանենք, համաձայնեց անամօթ Հաջին, թող  
գեավուր Աբրամը ուրիշ գոմեշներ առնի ու խուր-  
ձը կրի:

Ասեցին ու ճանապարհից թեքուելով սայ-  
լից գոմեշներն արձակեցին, քշեցին: Որդին ձայն  
չը հանեց, վախենալով նրանց զէնքերից, այլ շոա-  
պով հասաւ հօր մօտ:

— Հայր, ասեց, թուրբերը եկան գոմեշները  
արձակեցին, տարան:

Աբրամը բարձելը վերջացնում էր, հէնց որ  
«արձակեցին, տարան» խօսերը լսեց, աչքերը  
որդու վրայ խէթելով հարցրեց.

— Հապա՝ դու ո՞րտեղ էիր, որ արձակեցին:

— Սայլի մօտ:

— Քանի հոգի էին:

— Երկու:

— Յետոյ ինչո՞ւ թողեցիր, որ արձակեն:

— Ի՞նչ անէի, հայր, ո՞նց ընդդիմանայի. նը-  
րանք զէնքեր ունէին, ես մի դարդակ եղան:

Աբրամը ատամները կրճտեց որդու անշնոր-  
քութեան վրայ, առանց բերանից խօսք հանելու  
իւր սայլը քշեց, բերեց միւս սայլի մօտ ու դար-  
ձաւ որդուն հարցրեց.

— Անսիրտ տղայ, գոնէ ճանաչեցի՞ր, ովքեր  
էին գոմէշներ տանողները:

— Հաջու ու Սաֆարի պէս ուժով մարդիկ  
էին, լաւ չճանաչեցի, հայր, գլուխները բաշ-  
լուղով ծածկած էին, բայց այսպէս քշեցին, տա-  
րան:

Մատը մեկնեց տարած կողմի վրայ:

Աբրամը իւր սայլի ետնից կապած ձին ար-  
ձակելով, մունգութը ձեռն առաւ ու դարձաւ  
տղային ասեց.

— Անշորհք ու անսիրտ որդի, դու մարդ  
չես դառնալ, շուտ արա, թափիր սայլիդ խուրձը:

Այս յանդիմանութեան վրայ տղան կարմ-  
րատակեց ու գլուխը անհամարձակ կերպով բարձ-  
րացնելով խօսեց.

— Ինչու թափեմ, հայր. Աստուած է վր-  
կայ, լաւ է բարձած, մինչև կալը համնելը՝ մի  
հասկն ի՞նչ է, մի հասկ չի ընկնիլ:

— Քեզ ասում եմ, սայլը թափիր, լսում  
ես. Էլ ո՞չ մի խօսք, չուանները արձո՞իր: Ես  
գնում եմ, շուտ կը գամ:

Այս ասելով իւր մահակի վրայ դիմհար տալով  
թռաւ ձիու բամակը ու քշեց դէպի Մուշ գնացող  
ճամբէն: Բաւական գնալուց յետոյ նկատեց, որ  
հեռում երկու մարդ գոմէշներն առաջները տանում  
են: Աւելի քշեց ու բիչ մնաց հասուեհաս լինի: Զայն

չեր հանում, լոիկ մօտենում էր բայց ձիու թա-  
փը, ոտնաձայնը թուրքերի ականջին հասաւ:

Հաջին որ ետ նայեց ու Աբրամին ձիու վր-  
րայ, գոմշաքշին ուսին տեսաւ, սարսափը ջանն  
առաւ:

— Սաֆար, ի՞նչ անենք, գեաւուրը գալիս  
է, բայց կատաղած է գալիս, ի՞նչ ձար կասես.  
Հետը կոռուենք թէ փախչենք:

Սաֆարը որ թուրը հանած, ծայրով բզում  
էր գոմէշներին, որ արագ լնթանան, նոյնպէս  
շփոթուեց, երբ ուսով ետ նայեց ու ահարկու  
Աբրամին տեսաւ:

— Ամենից լաւն այն է, գոմէշները թողնենք,  
մենք փախչենք, եթէ այս անդամ մեղ չաջողուեց,  
ցաւ չէ, միս անդամ կը գնանք արօտից նրա  
ոչխարի ամբողջ հօտը կը քշենք:

Այսպէս նորհրդածելով Հաջին ու Սաֆարը  
թողին անասունները ու իրանք մի կողմի վրայ  
ձիաները քշել ուղեցին:

Այն ժամին Աբրամը սրարշաւ ետևներից  
ընկնելով սրտադուս գոռաց.

— Ո՞ւր էք ուզում փախել, վա՛նկոտ շներ.  
զուր նեղութիւն մի բաշէք, մինչև աշխարհի վեր-  
ջըն էլ ետևներիցդ գալու եմ, ևելքներդ ո՞ւր է.  
կանգնեցէք, որ սալ բայց թումհը, թէ չէ շան-  
սատակ կանեմ:



Նրա ուժեղ ու ամենի գոռոցը սրտաթափ  
արեց թուրքերին և ձեռ ու ոտք լքվոց գցեց:  
Ել չկարացին ձիանը առաջ վարել—մնացին ահեց  
պաշարուած, գինովի պէս դմբրած:

Աբրամը հասաւ թուրքերին, հինգ քայլ հեռու  
գոյշաքին բարձրացնելով որոտաց.

—Թափէք զէնքերը:

Թուրքերը թափեցին զէնքերը:

Իջէք ձիերից:

Իջան ձիերից: Աբրամը իսկոյն մի հարուած  
հասցրեց Հաղուն:

—Արձակիր ձիուդ սանձը:

Ել ո՞րտեղ արձակէր թշուառը, հազիւ ու-  
սը բռնեց ու մղկըտոցից թելիկ-մելիկ եկաւ: Աբ-  
րամը ինքն արձակեց սանձը ու նրանով Հաղու  
կոները մէջքին կապկըպեց: Դարձաւ Սաֆարին  
Խփելու. Նա ձիու արձակած սանձը Աբրամի առա-  
ջը գցելով պաղատեց, որ իւր կոները կապէ, ինչ-  
պէս կամենում է: Նրա կոներն ել ամուր կապեց:  
Զիաննց ոտնակապ տուեց, զէնքերը թամքի զա-  
ը գցեց, թողեց որ արօտում արածեն, յետոյ  
թուրքերին դառնալով Հրամայեց.

—Դէ, առաջ ընկէք, գնանք այն սայլի մօտ,  
որ թողել էք արտում:

Թուրքերի ճարն ի՞նչ էր որ չգնային: Աբ-  
րամը գոմէշներին բշեց, նրանց հետ ել թուրքերին.

բարկացած սրտով փայտը վրայ էր բերում առանց  
նայելու՝ թուրքի կոլքներին է դիպչում, թէ  
մէջքներին: Զառւշները մահակի հարուածից աղա-  
տուելու համար մէկ այս գոմշի փորի տակն էին  
մտնում, մէկ այն:

Աբրամը լուռ էր. թուրքերը հենց այդ լուռ-  
թիւնից էին սարսափում և հաղար ու մի պատու-  
հաս մտքներով անցկացնում:

Հասան արտը: Որդին հօր պատուէրը ակա-  
մայ կատարել, մնացել էր դատարկ սայլի մօտ կանգ-  
նած սպասելիս: Զարմացաւ, որ տեսաւ գոմէշնե-  
րի արանքում գալիս են իրանց զեղի կործանիչ  
թուրքերը:

Ուրախ ժպիտ անելով մօտեցաւ հօրը և ան-  
վստահ հարցրեց:

—Հա՛յր, այսօրուայ քո արարմունքները ինձ  
դարմացնում են: Եթէ դու գողերին պէտքէ բըռ-  
նէիր, զէնքերը նրան հետդ պտտացնէիր, ել ին-  
չո՞ւ համար էիր նրան սայլը դատարկել տալիս:  
Բարձած՝ պատրաստ կը լինէր, հիմի կը լծէինք,  
կը գնայինք, որ ժամանակ լինէր գող թուրքերին  
գայմագամի մօտ տանելու:

Հայրը արհամարհական հայեացք ձգելով որ-  
դու վրայ խօսեց:

—Եթէ շարունակես այդպէս մտածելը Մու-  
շի զագէայում, էլի մարդ չես դառնալ:

— Բա ի՞նչ կը դառնամ, միամտաբար հարց-  
րեց որդին:

— Աը դառնաս մեր գոմեշի ընկերը, կը գայք  
չառւշ Սափարը, լծան տակից կը հանի ու կը տա-  
նի քեզ: Ոչ կը տրլընգաս, ոչ կը մրլընգաս, որով-  
հետև քեզ համար միւնոյն կը լինի, թէ ո՞վ է  
տանում կամ ո՞ւր է տանում:

— Հիմի ի՞նչ կասես, հայր, սայլը չբարձե՞նք:

— Ինչո՞ւ համար, հարցրեց Աբրամը:

— Հապա այդ մարդկերանց տանելու չե՞ս  
գայմագամի կուշտը:

— Գայմագամն ինձ մօտ հիւր է ուղարկելու<sup>1</sup>  
ինչո՞ւ եմ այդպէս շուտով բաց թողնում դեռ  
պէտք է հիւրասիրեմ, խօսեց Աբրամը թուրքերէն,  
դու շտապիր քո սայլի տակից ակները հանիր:

Որդին այս անգամ բոլորովին մնաց ապշած:  
Ինքը խնդրում էր հօրը, որ թափած խուրձը բար-  
ձեն, օրը դեռ չմընած կալատեղ հասնեն, այժմ  
հայրը հրամայում է, որ սայլը սարբահան անի,  
ակները տակից հանիր:

— Հայր իմ, չեմ հասկանում, ի՞նչ ես ուզում  
անել, ախր օրը մի՛մ...

Մինչև որդին կմկմոցը կաւարտէր՝ Աբրամը  
ատամերը կրծտելով ճուաց:

— Անհնաղնդ որդի, քեզ ի՞նչ հրամայում

եմ, իսկոյն ա՛րա անխօս, երբ Ճնճղուկի չափ դա-  
տելու, հասկանալու ջնորհք չունեա:

Այս ասելով որդու ուսից բռնեց այնպէս  
շպրտեց, որ սայլի Ճաղերի վրայ ընկաւ:

Թուրքերը գոմեշների արանքում պայտ-պը-  
տոյս էին անում. վախենում էին ափը դուրս գալ:

Որդին կատարեց հօր պատուէրը կարծելով  
թէ ակների կամ սոնու վրայ կոտրած տեղ կայ,

հայրը նկատել է, ուզում է կարկատին Աբրամը  
խրձան հաստ թոկը երկուտակելով գցեց սոնու  
մէջ տեղը, յետոյ թոկի ծայրերեց մինը կապեց  
Հաջու գոտկատեղից, միւսը Սափարի:

Նրանք սիարթնեցին այս բանի վրայ ու մաս-  
ցին անխօս. մտքներում գոհ էին Աբրամից, որ  
այնքան բարեսիրտ է, բարձած ծանր սայլը թո-  
զում է, թեթև ակների վրայ է լծում:

— Հա՛զի, կամաց շնչաց Սափարը, ոնց տես-  
նում եմ էսօր գեավուր Խբրաիմը թուրքավար է  
վարուելու մեզ հետո էս հանդի բաներ մենք շատ  
ենք արել ուրիշներին. Հաջաթ չէ, երկու ակն է,  
ոնց լինի քաշ կը տանք:

— Հա՛ Սափար, յոգոց հանելով պատասխանեց  
գոռող Հաջին, կարելի է քիչ տեղ սոնու վրայ  
նստի Խբրաիմը մեր ուժը փորձելու համար. մի՛մի  
փայտ մէջքներիս կը հասցնի ու կը թողնի մեր Ճա-  
նապարհը շարունակենք: Յետոյ... մենք գիտ...

Հէնց այս զըռուցի մէջն էին թուրքերը, որ  
Աբրամը նրանց վրայ աչքերը խոժոռելով գոռաց.  
— Դուք որ շատ հայերի ձի էք շինել և վրէն  
նստել. շատ հօտաղի ու մաճկալի գութանում ե-  
զան տեղ լծել, տուն ու մարագ կրակի բերան  
տուել, ձեր քէֆի ու կրքի համար անհամար  
աղջիկ ու հարս անպատուել, ամօթահար արեյ,  
հապա ակները քաշեցէք դէպի առաջներիդ սարը,  
տե՛սնենք շնորք ունի՞ք:

Թուրքերի գողը բռնեց, մինչև առաջների  
սարը... այդ հօ հոգիները դուրս կը գար! Մնա-  
ցել էին կանգնած: Հէնց այն է, ուզում էին բե-  
րանները բանան, երկի տրտունջ անելու կամ Աբ-  
րամին ընդդիմանալու, գոմջի ահագին ճիպոտը  
թուրքերի մէջքով պատ ընկաւ և տրաքոցի ձայ-  
նը երկինք բարձրացաւ:

— Աստուած յաջողացրել է, մի անգամ ձան-  
կը էք ընկել. դո՛ւք, հայի լափով կշտացող շներ,  
Բնչ էք նայում, բաշէք գնսնիք:

Աբրամի ձեռի թափով գոմջի հաստ վարոցն  
էր իջել նրանց մէջքին, դիպած տեղն ի՞նչ հալի  
կը լինէր: Այդ հարուածն ուտելոց յետոյ թուր-  
քերն իրանք էլ չիմացան, թէ ի՞նչպէս փախս ա-  
ռան ու իրանց ետնից բաշ տուին ակները բաւա-  
կան տեղ:

Վաղելուց ու յուզուելուց բիշ էր մնում

մէջներից տրաքուեն, այնպէս հւում էին:

Պէտք է բարձրանային մի սրուլիկ նիճոտ  
լեառ, որի գլխին հին ժամանակներից խաչ կար  
տնկած:

— Մեզ խաչի մօտ ո՞ւր ես տանում, Իբրա-  
յիմ աղա, թախանձում էին թուրքերը:

— Գաղան թուրքին մինչև չթակես, չի կակ-  
ղիլ ու բարեկամանալ, Ճշմարիտ է ասած: Դեռ  
երկու վարոց է դիպել մէջքներիդ, «աղա» էք  
կանչում ինձ, որ խրձան սայլում լծէի, ո՞վ դի-  
տէ «փաշա» ու «սուլթան» ասէիք: Դեռ բարձ-  
րացէք, կանգնելու ժամանակ չէ՝ սարի գագա-  
թից կը տեսնէք, թէ հայի սուրբերը ի՞նչ սըր-  
տաբաց տեղեր են: Ո՞վ գիտէ ձեղ այնքան դուր  
գայ, որ մտադրուէք հայ գառնալ Հինգ հա-  
րիւր տարի է, ձեր Ալլահն էր զօրեղ, այսօր էլ  
գեալուր Իբրահիմի Աստուածն է զօրեղացել,  
բաշէք դէպի բարձր:

Այս ասելով մի վարոց էլ հասցրեց ու-  
սախառը, մէջքախառը: Թուրքերը թանչին տա-  
լով, գլուխները կոացրած մինչև գոտիկ գնում  
էին սարն ի վեր և ամեն կերպ զգուշանում, որ  
չսկըհան: Ահը սրտներումն էր, եթէ ոտները  
դուրս պրծնէր, գայթէին ու հաւասարակշու-  
թիւնը կորցնէին, աչքի բարին տեսնի, մինչև  
սարի տակը ակների ետնից մին պէտք է գլո-

բուէին: Տանջուելով, չնչասպառ լինելով, քափ ու  
քրտինք մտնելով հասան սարի գագաթը:

— Դէ հիմա կանգնեցէք, գոռաց ետևներից  
Աբրամը, երեսներդ դէպի ձեր ազօթարանը  
դարձնելով հաշիւներդ վերջացրէք այս աշխարհի  
հետ: Այսօր պէտք է դուք ձեր արած անիրա-  
ւութիւնների պատիժը բաշէք:

Թուրքերն իրար երեսին նայեցին ու մնացին  
լուսած:

— Հաջի, Սա՛ֆար, Խօսեց Աբրամը, դուք  
շատ գողութիւններ էիք արել ու մարսել. ամ-  
բողջ զաղիան. գաւառը զարհազարն էիք բերել  
կողոպտելով, սպանելով բռնաբարելով. մի՞թէ  
այդքանը ձեզ բաւական չէ՞ր, որ մաքներումդ  
դրիք ինձ էլ դիպչել: Ես ձեզ ի՞նչ էի պարտա-  
կան, որ գոմէշներս տանում էիք: Զէիք մտածում,  
որ խուրձը արտում կը մնայ, թռչունի, անա-  
սունի փայ, կը դառնայ, իսկ այն խրձան տէրը  
սուլթանի կառավարութեան պէտք է գլխահարկ,  
գետնահարկ և այլ անմիւ հարկեր տայ: Եթէ  
պահանջած հարկը հայ, հողագործը չունենայ,  
մուլթազիմները նրան պէտք է ծեծեն, մազերը  
փետեն, բերանում թքեն, կնիկն ու աղջիկը աշ-  
քի առաջ անպատուեն, անասունն ու կալուածը:  
Բայս դուք այս բաները չէիք մտածում:

Բա հայը ադամորդի չի՝, այսքան նեղութիւն  
կըլի՝, որ նրան տալիս էք:

— Անաս չունի, հայը նեղութեան սովոր է,  
կը տանի, խօսեց Հաջին:

— Ո՞ր մելքի համար հայը պէտք է նեղու-  
թիւն քաշի, հարցրեց Աբրամը սառնասիրա, նա  
Աստծու ստեղծած չի՝, այս լոյս աշխարքում ան-  
ցաւ օր չպէտք է ունենա՞յ:

— Աստծու ստեղծած աշխարհիս վթայ շատ  
բաներ կան, ամենը հօ հալալ չե՞ն, վրայ բերեց  
նոյն թուրքը:

— Ձեր խօսքով ուրեմն հայը հարամ ադա-  
մորդիներից է:

— Բա ի՞նչ է, գոռողութեամբ պատասխա-  
նեց Հաջին:

— Հապարիչ առաջ ինձ «աղա»՝ էիք ասո՞ւմ.  
Ես էլ եմ հարամ էլի՞:

— Զէ՛, դու հիմի էլ «աղա» ես, շտապով  
վրայ բերին թուրքերը, վախկոտ շան պէս նայե-  
լով Աբրամի ուսին դրած հաստ վարոցին:

— Իսկ ձեր շահնան ի՞նչ է, շուտով ասէք, տեսո-  
ւեմ, սպառնաց Աբրամը վարոցը օդում ճոճելով:

— Մեր շահնան... ահից կակազելով հարց-  
րին թուրքերը, մեր շահ ։ ։ նան, նուշամ է,  
գեաղա է:

— Ասա՛ մուկն է, շան ծնունդ, թէ չէ այս-

պէս վարոց կուտես հա՞՛, գոչեց Աբրամը ու Հաջու  
մէջին լարկեց:

—Թէկուզ կատու էլ դառնայ, ցաւից կոն-  
գունալով խօսեց չառշը:

—Իսկ ձեր գայմագամը, որ ինեղձ ու ար-  
դար մարդկանց բանտարկելով կողոպում է ու  
հարսները յափշտակում, նա ի՞նչ է, Սա՛ֆար:

—Աղա Իբրահիմ, այդ վարոցով չնփես, կու-  
ղես ասեմ, որ մեր գայմագամը համ շուն է,  
համ գայլ է:

—Ուրիշ ասա, ուրիշ:

—Համ խոզ է, աւելացրեց Սա՛ֆարը:

—Լա՛ւ, ուրեմն Հա՛ջի, Սա՛ֆար չառշներ,  
դուք վարոցի ցաւից ձեր մեծաւորներին համ  
շուն ու գայլ էք շինում, համ մուկն ու կատու,  
համ խոզ էլի՞։ Սպասէք, ես այդ նրանց կը յայտնեմ։

—Ի՞նչ ես վախ տալիս, մենք էլ կուրանանք  
որ այդպէս բաներ չենք ասել:

—Ո՞նց թէ կուրանաք, շա՞ն ծնունդներ:  
Որ այդպէս սուտ ու փուչ մարդիկ էք, էլ ին-  
չո՞ւ պէտք է շունչ քաշէք երկրիս վրայ: Ուրա-  
ցող անպիտաններ, դէ հիմի կո՛րէք աչքիցս:

—Իբրահիմ աղա, էս մինը բաշխիր, զալաթ  
արինք էսօր, գոմէշներդ հանաքի համար բշեցինք  
և լաւ պատիժ էլ քաշեցինք, թէ վարոցներ ուտելով  
և թէ ակները մինչև էստեղ բերելով: Բաւական

համարիր մեր կրած անպատճութիւնը. բաց թող  
գնանք. միւսանգամ գլուխներս քարովք կը տանք,  
քու ապրանքին մատով չենք դիպչեր Մէջքներիս  
թոկը արձակիր, քեզ մատաղ լլենք, ոտի վրայ  
չենք կարում հանգիստ կանգնել, ամեն րոպէ վա-  
խենում ենք ակների հետ սարից գլորուենք:

—Զուր տեղն էք վախենում, պէտք է գլո-  
րուէք, անվրդով պնդեց Աբրամը:

—Աստուածդդ սիրես, Իբրահիմ աղա, ուզում  
ես ծեծելով վարոցի տակ չորացրու, միայն մեղք  
արի, ակներից մեզ աղատիր:

—Զէ՛ անկարելի է, ինչպէս ակները բե-  
րել էք, այնպէս էլ պէտք է տանէք:

—Իբրահիմ աղա, անողորմ կերպով մի՛ պատ-  
ժիլ մենք սրեր ունէինք, նրանցից մէկը կը բերէիր,  
այստեղ գլուխներս կը կարէիր, կը միսիթարուէ-  
ինք, որ սրով մեռանք: Կանգնել ես ասում՝ ակնե-  
րը տարէք, մենք ո՞նց տանենք: Ե՛կ, Իբրահիմ աղա,  
Աստծուն նայիր, ստեղծողդ միտք բեր:

—Գլուխս մի՛ ցաւացնէք, այսօր ես ոչ Աս-  
տրծուն ուզում եմ նայել և ոչ ձանաշել, ակները  
անխօս պէտք է տանէք: Թէ դուք յօժար չեք,  
նրանք ձեզ կը տանեն:

Թուրբերն սկսեցին իրանց գլուխն ու արևը  
լալ և գոռալով աղաչել, որ Աբրամը ննայի,  
ուրիշ տեսակ պատժի:

— Ուրիշ տեսակ չեմ ուզում, իմ կամքը  
այսպէս է տալիս: Կտրական ասում եմ, ակների  
հետ գլորուելով սարի տակը պէտք է գնաբը: Ի-  
մացմբ, ձեր արժանի վարձն այդ է:

— Այսքան խնդրում ենք Աստղծուանու-  
նով, չես լսում, իբրահիմ աղա, բա՛ գու Աստուած  
չես ճանաչում:

— Զեղ պէս անաստուածներին տեսնելիս իմ  
Աստուածն էլ մտէս ընկնում է, զուր մի՛ նընդ-  
րէք, վճռել եմ անդարձ կերպով, դուք պէտք է  
գլորուէք: Էլ ո՛չ մի խօսք: Գնացէք այսուհետեւ  
ինձ կանչեցէք «Թանղրի թանըմաղ»:

Թուրքերը վիզները մեկնելով մօտեցան Աբ-  
րամին, աղաչանք արին, որ թևերն արձակի,  
բայց նրանց այնպէս քռնչեց, որ ակների վրայով  
ընկան ու մի ակնթարթում հոսեցին դէպի ներ-  
քեւ: Երկաթապատ միակտոր ակները հէնց փոքր  
պատճառի էին մնում որ գլորուեն: Վայր հոսե-  
ցին ու ետևներից թրևեցին կապկապած թուրքերին:  
Ուղղահայեաց սարի գագաթին Աբրամը կանգ-  
նած նայում էր, թէ ի՞նչպէս ակների թուիչքը հետ-  
զէտէ սաստկանալով հսկայական ոստիւններ է  
անում ու թուրքերին օդում լախտի պէս խաղա-  
ցնելով մէկ այս քարի ճակատով զարկում, մէկ այս:  
Մէկ վայրկեանն ի՞նչ է, մի վայրկեան անգամ թուր-  
քերը դադար չէին առնում, որ աչք բանան: Տեղ-

տեղ ակները հողաթմբի դէմ առնելով որ յան-  
կարծ թափ չէին անում ու թուկը ձգում, թուր-  
քերի մարմինները ծուլ էին ըլում կամ ակների  
տակն ընկնում կամ առաջը:

Զառւշներին ջարդ ու փշուր անելով ակները  
հասան լեռան ստորոտը և քարքարուտում կանգ  
առան: Աբրամը սարի գլխից ուզում էր նշմարել  
արդեօք թուրքերը գլխները շարժում, բարձրաց-  
նում ե՞ն: Բայց գու ո՛չ մեռնես. Նրանք այնպէս  
էին մեկնուել, ոնց որ սատկած օձեր:

Որդին հօրից շուտ էր հասել արիւնշաղակ  
գիակների մօտ և մնացել կողքներին պելացած:  
Աբրամը ծանր ծանր ցած եկաւ. մօտենալով  
նրանց մի զզուական հայեացք ձգեց ու դարձաւ  
որդուն ասսաց.

— Արձակիր մէջքներից թուկը և հաւաքիր,  
այժմ խուրձը բարձելու ժամանակ է, շտապիր, ես  
էլ ակները կը բերեմ:

— Հապա սրանց ձիանը, զէնքե՛րը, հայր իմ:

— Այդ մեր բանը չէ, քեզ ի՞նչ ասում են,  
այն արա:

Որդին սարսափահար եղած թուրքերի տա-  
րօրինակ մահով, առանց ձայն հանելու թուկը հա-  
ւաքեց ու գլխակոր գնաց դէպ իւր արտը: Աբ-  
րամն էլ ակները սոնու հետ առաւ շալակը ու  
հետևեց նրան:

Հառուշների մարմինները մնացին ընկած քառերի մէջ։ Ամառն էր, նրանց լափող գիշակեր թռչուններ շատ կը լինէին։

Դրանց սպանման լուրը շատ շուտ տարածուեց ողջ գաւառում։ Հարստահարուած գիշացիք, ամենն էլ ուրախութիւնից սրտերը իւղ բսեցին, որ վերջապէս անօրէն չառւշներից ազատուեցին։

Գայմագամն ու շահնան չգիտէին ում մեղադրեն այդ սպանութեան գործում։ որովհետև գաւառում մարդ չկար, որ նրանց վրայ գանգատաւոր չը լինէր։ Շահնան սկսեց ընդհանուրից վրէժնընդիրը լինել։ Անգմօրէն նեղեց, պահանջեց բահըրէն ոչ թէ ցանած, այլ և անվար ու անցան մնացած գետինների համար։

Աբրամի ատամը վաղուց մազ էր մանում շահնայի վրայ, գազաղած էր նրա դէմ։ Երբ եկաւ նրա կալը և սկսեց աւելորդ պահանջներ անելով գրփել ու առանց պատճառի հայհոյել հայքիստոնէի հաւատը, օրէնքը, Աբրամը կալի պոլնագին եղանը ձեռին կանգնած զգուշացրեց, որ լեզուն իրան բաշի ինչ որ բահրա հասնելու է, առնի ու ձանապարհը շարունակի, բայց աներես թռուքը աւելի անպատկառ հայհոյանքներ ուղղեց նրա կնկանըն ու հարսներինոր կալում էին։ Աբրամն այդ ժա-

մանակ էլ չհամբերեց, կատաղած վրայ վազեց ձեռի եղանն այնպէս ուժով իրեց շահնայի սըրտի գդալում, որ ծայրերը մէջքով դուրս եկան. այդպէս շամփրած բարձրացրեց շահնային ու կալի մէջ խփեց գետնով։

— Թո՞ղ ինձ աշխարհը «Թանդրի թանմազ» ասի, բայց իմ կարծիքով ի՞սկ, աստուածապաշտութիւնն այն է, որ նզովուած հոգիները մէկ մէկ այսպէս դժողքն ուղարկես։

Այդ անելով Աբրամը վճռել էր առ միշտ թողնել Խաս գեղը ու հեռանալ Մուշի կողմերից, որ գայմագամն ու փաշա չկարենան շուտով իւր հետքը գտնել։ Վերցրեց իւր ազգականները, շարժական հարստութիւնը և գաղթեց Բաշ գեղ։ Այդ միջոցներին այս կողմերը վայրենի է եղել, դմբուլցի բուրդերն են բնակուելիս եղել։ Աբրամը իրոկել հալածել է արդ վայրենի բուրդերին և ինքը իւր ազգականներով բնակուել Կամաց կամաց Աբրամի մօտ են ժողավուել Խաս գեղացի շատ ընտանիքներ և մեծ շինութիւն արել, ինչպէս տեսնում ես։

Աբրամին չեն կարացել վնաս տալ ոչ թռուքերն և ոչ բուրդերը։ Նրա անունից ամենն էլ զարհուրելիս են եղել։ Այն ժամանակուանից օջաղի անունը կպել է «Թանդրի թանըմազանց»։ Բայց ինքը եղել է բարեսիրտ ու ողորմած, ինչ-

19048

պէս որ հիմի նրա ծուռներն ու կուռներն են  
Բաշ գեղում հացով ու հիւրասեր:

Աբրամի ուժի և քաջագործութեան մասին  
լսելով եմ ասում, բայց ես աչքով տեսել եմ նրա  
թոռ Բրսօյին, ու 90 տարեկան մեռաւ: Այ հըս-  
կայ ու քաջ մարդ: Այս Սողանլուխի մեծ անտա-  
ռի շուրջ էլ քուրդ չկար, որ Բրսօյի անունից  
չդողայ: Հիմի ուր են այնպիսի ուժեղ, ազգի պաշտ-  
պան Մարդիկ»:

Այսպէս վերջացրեց ծերունի Ալմէն «Թանշ-  
տանմաղ» անուան պատմութիւնը:



2018

Իմ՝ աշխատութիւններից առանձին գրքոյկ-  
նելով տպուել են.

1,	Հեքեաթներ	(15 պատմութիւն)	գ— 30 կ.
2,	Ծովինար բ.	տիպ . . . . .	20 կ.
3,	Խարազի տղայ	. . . . .	40 կ.
4,	Խուլ Խաչիկ պատմ. վէպիկ	. . . .	25 կ.
5,	Շէն թագաւորի աղջիկ	. . . . .	25 կ.
6,	Գալօ Ափօ	. . . . .	10 կ.
7,	Աստուած չճանաչող	. . . . .	10 կ.

Դիմել Կենտրոնական գրավաճառանոց կամ  
ինձ հետևեալ հասցեով

Въ Тифлисъ  
Мариено-Анановское училище, учителю Саркису  
Камалянцъ

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊԵԿ.